

**ԻՐԱԿԱՆ ԹՎԵՐ
ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐ
ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

§ 2. ՈԱՅԻՈՆԱԼ ԹՎԵՐ

1. Գործողություններ ռացիոնալ թվերի հետ, նրանց հիմնական հատկությունները (աքսիոմները)

1. Ստուգեք (միկրոհաշվիչի միջոցով) 2) և 6) առնչությունների ճշմարիտ լինելը $a = 5,216$, $b = 2,159$, $c = 1,267$ թվերի համար:
2. Ստուգեք (միկրոհաշվիչի միջոցով) 9) առնչությունը $a = 0,219$, $b = 1,197$, $c = 2,057$ թվերի համար:
3. Հաշվեք (միկրոհաշվիչի միջոցով) $a - b$ և $a + (-b)$ արտահայտությունների արժեքները $a = 3,5109$ և $b = 3,4801$ դեպքերում: Համոզվեք, որ այդ արժեքները համընկնում են:
4. Հաշվեք (բանավոր) $731 + (295 + 269)$ գումարն ամենապարզ եղանակով: Նշեք դաշտի այն աքսիոմները, որոնցից օգտվեցիք:
5. Հաշվեք (բանավոր) $(8 \cdot 11) \cdot (7 \cdot 125)$ արտադրյալն ամենապարզ եղանակով: Նշեք այն աքսիոմները, որոնցից օգտվեցիք:
6. Առաջին դասարանցին $8 + 7$ գումարը հաշվելու համար սկզբում 8-ին գումարեց 2, այնուհետև 10-ին գումարելով 5, ստացավ 15: Նշել այն աքսիոմները, որոնցից նա օգտվեց: